ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N26/07

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան 25 հունիսի 2026թ.

Մասնակիցների ցուցակ՝

1. Աննա Կարախանյան
2. Առնակ Մելիքյան
3. Անդրանիկ Ալեքսանյան
4. Արամ Վերդյան
5. Ալբերտ Տոնեյան
6. Կատարինե Գևորգյան
7. Միսակ Խաչատրյան
8. Նարինե Դերձակյան
9. Սիրանուշ Վարդանյան
10. Քրիստինա Հակոբյան
11. Քրիստինե Գյոնջյան
12. Իգոր Մկրտումյան
13. Վեսմիրա Հարությունյան
14. Վահան Հովսեփյան

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Վեսմիրա Հարությունյանը: Օրակարգի վերաբերյալ հնչեցին առաջարկություններ, արդյունքում միաձայն հաստատվեց հետևյալ օրակարգը՝

Օրակարգ՝

1. «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների գրանցման ավտոմատ համակարգի անցման առաջարկի մասին

2. Գրանցման ոչ ենթակա դոմենային անունների ցանկի և օբյեկտիվ վավերացման չափանիշների հրապարակման առաջակի մասին

1. «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների գրանցման ավտոմատ համակարգի անցման առաջարկի մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Քրիստինա Հակոբյանը, ով ներկայացրեց ռեգիստրարների կողմից բարձրացված առաջարկը: Միևնույն ժամանակ Քրիստինա Հակոբյանը հիշեցրեց խորհրդի անդամներին, որ դոմենային անունների գրանցման ավտոմատ համակարգին անցնելու հարցը բազմիցս քննարկվել է խորհրդի կողմից, սակայն առ այսօր որևէ որոշում չի կայացվել: Որոշակի հարցադրումներից ու պարզաբանումներից հետո խորհուրդը ձայների 9 կողմ, 2 ձեռնպահ, 1 դեմ հարաբերակցությամբ (խորհրդի 1 անդամ չի մասնակցել քվեարկությանը) որոշեց՝

Որոշում՝

1. ***Ընդունել «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների գրանցման ավտոմատ համակարգի անցման առաջարկը:***

2. Գրանցման ոչ ենթակա դոմենային անունների ցանկի և օբյեկտիվ վավերացման չափանիշների հրապարակման առաջակի մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Քրիստինա Հակոբյանը, որից հետո հարցի շուրջ հնչեցին տարբեր կարծիքներ ու մոտեցումներ: Քննարկման ընթացքում առաջարկվեց հետաձգել հարցի քննարկումը, ինչը և ընդունվեց:

Նիստի նախագահող՝ **Իգոր Մկրտումյան**

Նիստի քարտուղար՝ **Վեսմիրա Հարությունյան**